ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳ. ՃԵՄԱՐԱՆԻ ՏՕՆԸ

Անցեալ սեպտեմբերի 25-ին, ս. Գէորգի տօնի օրը, Մայր Աթոռում կատարուեցաւ մի նշանաւոր տօնախմբութիւն—այդ օրը լրանում էր ս. Էջմիածնի Հայոց Հոգևոր Ճեմարանի 25 տարին. և յոբելեանը կատարուեցաւ ընտանեկան շքեղութեամբ։

Սպասելով, որ յոբելինական հանդէսների ընդարձակ նկարագիրը տպագրուի «Արարատ» ամսագրի էջերում, մենք այստեղ կբաւականանանք յիշելով, որ այդ օրը հաւաքուել էին Երևանից ու շրջակայքից անթիւ բազմութիւն. ստացուեցան փառաւոր ուղերձներ Հայոց բոլոր թեմական դպրոցներից ու այլ հաստատութիւններից, մի քանի հարիւր հեռագիրներ շատ նշանաւոր հայագէտներից, գիտնականներից և հաստատութիւններից, անհատներից, մամուլի կողմից և վերջապէս եղան դրամական և այլ՝ թէև շատ սակաւ նուիրաբերութիւններ։ «Լումայի» խմբագրութեան կողմից հանդիսին ներկայ էր Հ. Հրատարակիչը։

Ճեմարանի վարչութիւնը և Հ. Տեսուչը ոչինչ ջանք չէին խնայել ըստ կարելւոյն փառաւոր կացուցանելու այդ նուիրական հաստատութեան անգրանիկ յոբելեանը և յատկապէս այդ օրուայ համար հրատարակել էր Ճեմարանի հիմնադիր երջ. Գէորգ Դ. կաթողիկոսի համառօտ կենսագրութիւնը, կազմուած Ճեմ. ուսուցիչ պ. Մ. Աբեղեանի ձեռքով։

Մաղթում ենք այդ ցանկալի հաստատութեան յարատևութիւն և շատ յոբելեաններ ու աւելի փայլուն ապագայ։